

ԲԱԺԱՆՈՐԻՍԿՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար 12 Ժր.
Տարեկան 6
Վեցամսեայ 6
Արսասահմանի համար տարեկան 15
Վեցամսեայ 8

Ամերիկայի համար 3
Տարեկան 3
Վեցամսեայ 1.50

Մանուգրաւ տող ստա րին երեսին համար 40
Իսկ վերջին երեսի հա մար 20 սակրիւ հ. երե ֆէն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը ղայ:

Վառեայի համար ձեռք 40 սակրիւ

ՁԱՆՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂՊԲԵԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԻՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐՇԲԵՍԱԹԻ ԵՒ ՇՄԱԹ ՕՐԵՐԸ

Նախկին և նրա զրկեղ Խրատարական հաս ջնիւն

Редакція

Reda

Արտատ

ձեռք (20 ՍԱՆԹԻՄ)

Պուշկարիոյ համար ձեռք (15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք և չեն տրայր

«ՇՄԱԹ»-Ի ԲԱԺԱՆՈՐԻ ԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՐԻ ԳԼՏԲ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ԴՐՈՒԹԻՒՆԸ

Մակեդոնիոյ մէջ յեղափոխու թիւնը կը գոռայ: Ազատութեան հերոսական, արգաւանդ եր կունքներուն մէջ կը գալարուի մարտիրոսութեան և ստրկութեան այդ սրկիրն ալ:

Բայց ինչպէս ստեղծուեցաւ այս կացութիւնը: Քաջ բազուկ ներու, խիզախ սրտերու, անվե հեր խոյանքներու անձնուրաց, ինքնադրոգոր տրամագրելիութիւնը բաւական եղաւ սարքելու, կազմակերպելու և երեւան բերելու այս կատաղի ընդլուծմը: Անոնք որ հիմա ապստամբութեան դրօշը կը ծածանեցնեն Աիլոյն ու Ռոտտոնքէն անդին, անձնական հարստութեան տէր անձնք են, ինչնց բոլոր ինչքը տրամագրելով իրենց սիրական խոհալին իրագործմանը. ամենեւին. անոնք խեղճ չքատոր մարդիկ են, և սրտի, զգացման հարստութենէ վատ ուրիշ ոչինչ ունին: Արեւմտ ինչպէս հնարե շաւ այս ապստամբութիւնը կազմակերպել. նախախնամական միջամտութիւն մը կայ: Ան ալ ոչ. Գոնէ հիմակուան ատենու, ինչպէս կերեւայ, Աստուած այս սոսակ բաներու չի միջամտել կոր, անշուշտ գիտած ըլլալով որ մարդոց խելքը միտքը շատ շարքացած ըլլալով անոնք պիտի կրնան ինքզինքնին կառավարել:

Բայց շատ պարզ բան մըն է ասորը գաղտնիքը:

Չորս տարիէ ի վեր, մակեդոնական յեղափոխական մարմինը գրութիւն մը հիմնած և անվրդով գործադրած է զայն: Այն է գրամ հաւաքելու գրութիւնը: Իազուկները պատրաստ, գրամի կը մնար գործերնին: Անոնք ալ մեղի ոչէս աղքատ շատ ունին, բայց հարուստ ալ ունին. իրաւէ որ մեր հարուստները անսահման կերպով աւելի հարուստ են և մանաւանդ թուով աւելի շատ:

Անոնց մէջ ալ սուրբ գործին յաջողութեանը, գլուխ հանուելուն հակառակորդներ կային. անոնք ալ «ապստամբներ» նուազ փաշածիւներ և զաղտնիքի հետաքրքրուող ճիւղներ ունէին: Մանաւանդ որ գրամը ասանկներուն քովն էր. ինչ ընէին մարդիկը. փորձեցին քաղցրութիւն բանեցնել, գործին տիրականութիւնը, նուիրականութիւնը քարոզեցին սրտաշարժ ու համոզելի շնչոտերով. յորդորներ կարգացին, կոչում ըրին հայրենասիրական զգացումներու: Անշուշտ գտնուեցան գլխաւոր զգացումներ. բայց շատեր ժայռի պէս անմուռնչ և անկարեկիր մնացին:

Այն ասան մակեդոնական յեղափոխական մարմինը, ճարահատ, կտրուկ, բիրտ, բայց արգիւնաւոր գրութիւն մը որդեգրեց:

Դաշոյն և սովա երեսան հանեց:

Պուլկարիոյ շատ տեղերը, Մակեդոնիոյ մէջ՝ դժկամակներու գանկեր կտրուեցան, կոչեր, փորձեր գաւառներու, շատ չէ, պէտք եղածին շտի, որքան ոչ հարկաւոր էր սարսափի տիրապետութեան տակ այդ գրամատէր հրէշներուն քսակները բանալ տալու համար ի նպատ յեղափո թեան: Արագը սկսաւ վաղել, չորս կողմէն. խողովակներու պէս, ահագին դումարներ գոյացան ու սպառեցին՝ սուրբ գործին պատրաստութեանը համար: Քանի մը տարուան միջոցին, մէկ կողմէն երբ ժողովրդեան զգացումները կը հրգեհուէին, միւս կողմէ ապստամբութեան գետնը կը յարգարուէր լուռ ու մուռ. ալ զըրամի նեղութիւն չիկար. մակեդոնացի յեղափոխականը՝ հայ յեղափոխականին պէս անարդ գրամին պակասութեան չարչարանքը չունէր: Ժողովուրդը առհասարակ սիրալոյսար բացած էր իր համեմատ քակը, իսկ հարուստը՝ վերոյիշեալ գրութեան գործադրումին տակ:

Ահա այս կերպով միայն կրցաւ գլուխ ելլել Մակեդոնիոյ ապստամբութեան գծուար գործը:

Եւ արդէն, 95 թուականին, Պուլտոյ մէջ ինչ եղաւ հնչակեան գրութիւնը: Եթէ Պուլտոյ ջոշապաներէն յարգելի բացառութիւն մը ինքնալոյսար բացաւ իր քսակը յեղափոխութեան, մեծագոյն մասը ինչ ըրաւ. մինչև որ ատճանակի փողը ճակտին ուղղուած շտեսաւ՝ բացաւ իր գրամարկըն գուռը:

Իր նպատակին հասնելու համար ուրիշ ճար ունէին հնչակեանները: Երբոր ժողովուրդի մը հարուստ գաւառաբող զգացումով եւ գաղափարով այնքան ինկած վատթարացած է որ՝ իր աչքին առջև ջարդուող արեւա կիցներուն սիրտիւն համար մէկ փարա տալու կը դժկամակի, անսր ձեռքէն այդ թշուառ բայց հրաշագործ մետաղը բրցնելու համար ինչ լաւագոյն միջոց կը կենայ: Այն գրութիւնը՝ զոր հնչակեանները գործադրեցին 95ին և որ այնքան գեղեցիկ արգիւնքներ տուաւ մակեդոնական յեղափոխական գործին:

Մինչև հիմակ, այսինքն յեղափոխական վեհ գաղափարին մեր մէջ ծագումէն ու տարածու լէն ի վեր, ոչ մէկ հարուստ ինքնադրոգոր կերպով հանեց պու մար մը նուիրել հայ յեղափո խութեան: Աննչան ու ցանցառ նուէրներ եղան՝ սպառնալիքի և յորդորներու սաղարանքին տակ: Եւ ամէն ժամանակէ աւելի ջոշ քսակները հերմեսպէս փակուած են, Պուլտոյ և կողկասի նապայները հանգարտորէն կը հանց շին իրենց հաղարատը ոսկիներուն վրայ, մինչ յեղափոխութեան և ապստամբութեան ձեռ նարկները կը կաղան. կը դանդաչին, ու հայը կը հարստահարուի անընդհատ թուրքիոյ ամէն կողմը, վայրենի պատրիարք մը խոյերու ու գայլերու ընկերակցութեամբ՝ վճռական հարուածը

տալ կերեւայ հայկական դատին: Յնգափոխականը՝ գրպանը պարայ՝ սիրտը կատաղութեամբ եւ արցունքով լեցուն՝ քայլ մը չի կրնար առնել: Ընդհանուր կաշկանդում մը ամէն տեղ: Չքառութիւնը տիրական է: Կացութիւնը ահռելիօրէն փափուկ: Ինչ ընել:

Վատ, գարշելի պատրուակներու փաթտուող տնարգ արարածներու ինչպէս խօսք հասկըցնել, Համբերութեան, երկայնամտութեան բոլոր աստիճանները մաղլցելով վեր ելլալէ յետոյ՝ շնչասպառ ու վհատ՝ ինչ որոշման կը յանգիս, ինչ կընես:

Այն ազգը, որ երկար տարիներ շիկերէի մը պէս ամէն կողմէ նեղը կը գրուի ու կը հալածուի, վճռական, ամենհի ստուամներ կ'ընէ վերջի վերջոյ:

Մեր ազգը այս ոստումներն ընելու աստիճանին հասած է ալ: Համբերութիւնն ու երկայնամտութիւնը իրենց կատարին յանգած են:

Պէտք է գործել:

Մեր յեղափոխական կողմակերպութիւնները պէ՛տք է որ գիճեն արմատական ու բռնական միջոցներու՝ գրամ գտնելու համար:

Հնչակեան գրութիւնը պէտք է որ վերականգնանանայ:

Այս նպատակին հասնելու համար՝ միջոցներու ընտրութեան մէջ ու եւ տողնապի ենթարկուելու չէ. և մանաւանդ բնաւ, երբէ՛ք ականջ կախելու չէ ասագիէն անգիէն բարձրացող գոստ բորոտ աղաղակներու: անոնք նուաղելու, կարկամելու դատապարտուած բերաններէ ելլող անշուն կառաչներ են:

Դրութիւնը վերականգնելու է ամէն գնով:

Շատարշ

Քը զորացնելու պիտի նպաստէին... Երբ զորացնելու պիտի նպաստէին...

Գրանեն : Թուժակութիւնը մեր վար... Գրանեն : Թուժակութիւնը մեր վար...

Պիտեան Կ. Պիտեան

ԺԱՄԱՐԵԱՆԻ ԳՈՐԾ

Շուշի մէջ, մեծահարուստ, այս... Դեռ յայտարարութիւն այս յանդուգն...

անբաղդատելի հիւանդանոց : Ռու... Ժամհարեանը կրնայ 800 որբ նայի...

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԵՐԱԾԻՆ

Օր միանց, Հեղինէն շատ տխուր... Երբ միանց, Հեղինէն շատ տխուր էր...

ՆՄԱՍՏՈՒՓ

Փութաբէթ, Մ. Մ. Արթիւնեան... Մտացանք ձեր նամակն ու մէկ առաւր...

Ի՞նչ էս ասում

Ի՞նչ էս ասում, տանը քեզ հետ խո... սել չէի կարող, մօրս ներկայութիւն...

Զտնայումս

Զտնայումս սէրը ողորակու, բայց... հետուից իմ ականջն ընկան միջուկ...

Կարելի է : Կարելի է : Բայց ի՞նչ կայ ներս...

Ես փախայ քեզից՝ իմ սէրը :

(Շարունակելի)

անհկա է արմատական միջոցը՝ որ-
բերու անհաճոյ արտադրութեան ա-
ռաջը առնելու :

Եւ որովհետեւ Պ. Ժամարեան եւ
իր նմանները երբէք այս բաները չեն
խորհած ու չպիտի խորհին, ուրեմն
յեղափոխականներուն կը մնայ ա-
նոնց տեղը խորհիլ ու գործել :

Մեր մեծահարուստները՝ իրենց
կամքին հակառակ՝ հայրենասէր ընե-
լու հարկին մէջ դնելու ենք :

Ու իրենք է որ պիտի վաստկին :

Չ Ո Ւ Ա Ր Ճ Ա Լ Ի Ք

Բարիզեան հանդէս մը Թուր-
քիոյ գրաքննութեան վրայ յոդ-
ուած մը հրատարակելով հետեւ-
եալ ծիծաղելի մանրամասնու-
թիւնները կուտայ :

«Նախ, կըսէ յօդուածագիրը,
բոլոր բառարաններուն մուտքը
արգիլուած է Թուրքիոյ մէջ այն
պատճառու որ «Սուլթան» բառը
կը գտնուի անոնց մէջ և Սուլ-
թանին վրայ տեղեկութիւններ
կը պարունակեն. Խասի «Երու-
սաղէմ ազատուած» անուն գիրքը,
Շաթոպրիանի «Մարտիրոսներ»,
Վիկթոր Հիւկոի «Որիանթալ-
ներ» և Պուրի տասնևչորրորդի
գարը, Վօլթէրի գրքերէ բոլոր
գործերը, Ռապէրի հեղինակու-
թիւնները, Լաֆօնթէնի «Կառակ-
ներ», աշխարհացոյց տախտակ-
ները և այլն և այլն բոլորն ալ
արգիլուած են, և մաքսատան մէջ
խիստ հսկողութիւն կը կատար-
ուի : Սակայն բոլոր այս գիրքերը
կը գտնուին և կը ծախուին Իե-
րայի եւրոպական գրաւաճառ-
ներուն քով :

«Գաղտնիքը վարպետութեան
մը մէջ կը կայանայ որ միշտ
յայտողած է : Արգիլուած գիրքե-
րուն կողքերը հանուած և տեղը
գրուած են ազատ մուտք ունե-
ցող կամ աննշան գիրքերու կող-
քեր, այնպէս որ երբ գիրքերը
Եւրոպայէն մաքսատան կը հաս-
նին, թուրք պաշտօնեան որ
գրեւէ արգիլուած գիրքերուն ա-
նունները և գիրքի մը անունը
կարգալու չափ ֆրանսերէն, խա-
ղը չկրնար կռահել և կը ձգէ որ
անցնին անոնք առանց երբէք
գիրքը անգամ մը բանալու և
մէջը կարդալու :

Այսպէս Չօլաի գրքերէ բոլոր
գիրքերը որոնց Թուրքիա մուտ-
քը արգիլուած է, կը գտնուին
Բերաի գրաւաճառներուն ապա-
կեղարաններուն մէջ զանազան
անուններու ներքեւ, զոր օրինակ
«Կուսուլմի ֆրանսերէն լեզուի»,
«Արտերու մշակութիւնը», «Սօ-
ֆիի գժբախտութիւնները» և
այլն :

Փ Ո Ւ Ք Ի Թ Վ Ս Ա Ր

Յիշիպիհէն կը գրեն մեզ :

Վերջերս հոս ժամանեց լրագ-
րոյք խմբագիր պ. Վարդօ : Իր
համակիրներուն կողմէ սիրալիր
ընդունելութիւն գտաւ : Յաւ է
մեզ յայտնել թէ քանի մը վա-
տողի սինդրոններ իր ներկայու-
թիւնը տեղւոյս կառավարութեան
մատնանիշ ըրին, այսինքն մատ-
նեցին : պ. Վարդօ ոստիկանա-
պետին մօտ հրաւիրուեցաւ : Վա-
տերուն ակնկալութեան հակա-
ռակ, ոստիկանապետը կարճ տե-
սակցութեանէ մը ետք պատուա-
ւոր հիւրի մը պէս վարուեցաւ
պ. Վարդօի հետ, և պատուասի-
րեց զայն : Յարգելի խմբագիրը
երեքշաբթի դիշեր լսարան կաղ-
մակերպեց և բազմաթիւ ունկն-
դիրներու ներկայութեանը խօ-
սեցաւ : Նիւթ ունենալով «Պուլ-
կարիոյ գաղութը» և հայ յեղա-
փոխութիւնը : Ինչպիսիք ծա-
փահարուեցաւ :

Ա Չ Գ Ա Յ Ի Ն Ք Ր Ո Ն Ի Կ

Պոլսոյ թերթերը կը ծանուցա-
նեն Իզմիրի երեւելի և մեծահա-
րուստ հայերէն Մատթէոս Պալ-
եօզեանի սպանութիւնը : Անցած
ուրբաթ առտու երբ Պալեօզեան
տունէն ելլելով իր վաճառատու-
նը կերթար, անձանթ մը իրեն
կը մօտենայ և խօսակցելով մին-
չեւ վաճառատան դուռը կը
հասնին : Հոն, սակայն, անձա-
նթը յանկարծ բեկովէր մը հա-
նելով երկու հեղ կը պարպէ Պալ-
եօզեանի վրայ որ՝ զլխէն զար-
նուած՝ կիւնայ կը մեռնի : Սպա-
նիչը փախած առանց կը բռնուի
երկու շինորդներէ և իր հարցա-
քննութեան մէջ կը յայտարարէ
թէ ինք բնիկ պարսկաստանցի է
և տարի մը առաջ Ռուսիա գացած
էր՝ Մանուկ Էմմանուէլեան ա-
նուն մարդու մը քով ծառայու-
թեան : Ժամանակ մը ետքը տէրը
50 ոսկի տուեր է իրեն Իզմիր
Երթալու համար, ուր նամակ մը
ստացեր է անկից՝ պատուիրոգ որ
սպաննէ Պալեօզեանը, որուն հետ
վէճ մը ունի եզեր : Սպանիչը
Պետրոս Ազիզով անուն երիտա-
սարդ մըն է 30-32 տարեկան :

Պոլսոյ հայ թրթերը կսկծա-
լի աղաղակներով կը գուժեն այս
միջիտնատէր հայուն բանական
մահը, վասնզի անիկա ժամանա-
կով Կեսարիոյ Ս. Կարապետ վան-
քին 1500 ոսկիի պարտքը վճա-
րած է եղեր և մեծ սովին ժամա-
նակ 5-600 պարկ ալիւր շրկած
է եղեր իր ծննդավայրը :

Միւս կողմէ սակայն մեր ստա-
ցած տեղեկութիւններուն նա-
յելով՝ հանգուցեալ միջիտնատէրը
կատաղի հակայեղափոխական մըն

էր, բոլոր սրտովը կ'ատէր աղ-
գային ազատագրումին համար
ընդունուած մեթոտը և մինչեւ
հիմակ փուլ մը շէր տուած այդ
նպատակով :

Շիտակը մեզի համար մեծ ցաւ
մը չէ այս տեսակ հայերու մահը.
անոնք հին սերունդին խօսք չը
հասկցող, պինդգլուխ և ազգին
վիճակին չկարեկցող անպէտ
ներկայացուցիչներն են : Պալ-
եօզեանի մահուամբ թերեւս իր
10-15 միլիոն ֆրանքի հարստու-
թիւնը՝ լաւագոյն ձեռքերու
անցնելով՝ օգտակարապէս գոր-
ծածուի այսուհետեւ :

— Անմահ Ռաֆիի մայրը՝ ձէյ-
րան Մէլիք Յակոբեան, հետեւ-
եալ սրտածմրիկ տղերն՝ հրատա-
րակած է Կովկասի հայ թերթե-
րուն մէջ «ազերսայիր» վերնա-
գրով :

«Դիմում եմ աղերսագրովս իմ
հանգուցեալ որդու սրտացաւ
բարեկամներին, մի կոչ անելու
լրագրով ընդհանուր հայ հասա-
րակութեան, որպէս զի նրանք
մեզ նպատեն ինթապէս ի սեր
մարդկութեան, աղատելով մեզ
դառն ազբատութեան մայրը ճի-
րաններից, սրտք իմ որդուս
մահուանից յետոյ օրէցօր կուտակ-
վելով և բազմապակիելով հառց-
բին մեզ մեր ձեռութեան միջու-
ցին այն յեղակէտին՝ որ մենք
ակամայից պատուում ենք պատ-
կառանքի համեստ վարողորդը և
գրմում ենք հայ շահաւտու-
թեանը :»

Այսպէս ուրեմն այն երկրին
մէջ ուր ժամհարեաններ, Ման-
թաշօֆներ և ասոնց պէս հա-
րիւսուորներ կապրին՝ եթէ ոչ
հաղաբարուներ, հայ մեծ վիպա-
սանին մայրը անթութեան մատ-
նուի պիտի եղեր : Կեցցէ՛ կով-
կասի հայութիւնը :

«Շարժում» հրատէր կը կար-
գայ արտասահմանի հայութեան
իր պարտքը կատարելու այս ցաւ-
ալի պարագային մէջ : Խմբագ-
րութիւնս սիրով յանձն կ'առնէ
ընդունիլ և Ռաֆիի հէք Բօր-
կանը հասցնել շրկուելի ընպատ-
ները :

Ա Ր Տ Ա Ք Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Մ Ա Կ Ե Դ Ո Ն Ի Ա

Վերջերս շատ մեծ գովեստով
խօսուեցաւ Բէթրիչքոյի ապրա-
տամբներու մասին. անոնք հայր
Բութրուլ անուն քաջի մը առաջ-
նորութեամբ 70 հոգիով կը
պաշտպանէին Բուրբէլի կիրճը
ամբողջ 27 ժամ թրքական եր-
կու վաշտերու դէմ, մեծամեծ
կորուստներ պատճառելով անոնց :
Սակայն հիմակ դժբաղդարար
հայր Բութրուլի խումբը նեղ
դրութեան մէջ կը գտնուի եզեր :

նրոյն իսկ լուր կայ թէ այլեւս
թուրքերը տիրած են կիրճին :

— Քանի մը օր առաջ՝ Պօրիս
Սարաֆովի քովիցէին նախ-
կին անդամներէն մէկուն՝ Թօմա
Տալիտովի առաջնորդութեամբ
նոր խումբ մը գացած է Մակե-
դոնիա : Կը հաւատեն լիճոյ Ցա-
վիտովի խումբը և ոչ ներքին
կազմակերպութեանն ուրիշ խում-
բեր միտք ունին ու է արդէք
յարուցանելու ապստամբութեան
դէմ :

— Լուր կայ թէ գնդապետեան
քօֆ որ Մանասթրի կողմերը ա-
պստամբութեան հրամանատարն
է՝ թուրքերուն ձեռք գերի ին-
կած է, բայց այդ լուրը չէ ստու-
գուած առկաւրն Սօֆիայի մակե-
դոնական շրջանակներէն :

— Ներկայ ապստամբութեան
մէջ մեծ կարեւորութիւն ունե-
ցող խնդիր մըն է սա թէ արդեօք
ապստամբները կրցան պահել ի-
րենց դիրքերը Քրէնայի և Բու-
բէլի կիրճերուն քովերը : «Բէ-
թրուլ» թերթը կը պնդէ որ հայ
Բութրուլ չրկին սրբեր է Բուրբ-
լի կիրճին, ոսկից պիտի կրնայ
իշխել Տէտէ Աղաճ—Սէլան/կի
երկաթուղոյի վրայ : Գոյնպէս
Քրէնայի կիրճի մասին մտկեղո-
նական շրջանակներու մէջ կը
հաւատան թէ տակաւին ապրա-
տամբներու ձեռքն է :

— Մակեդոն. Օտրինեան բարձ-
րագոյն կամիտէի նախագահ Պ.
Միխայելիւսքի ձամբորդութիւն
մը պիտի ընէ դէպի Եւրոպա :
Այսօր կամ դժպը կը մեկնի, նախ
հանգրպելով Վիէննա :

Ն Ր Ի Ր Ա Ն Ի Ա Ր Ե Ի Ե Լ Բ Ը

Կրեց անգլիացի Ռեիլիւմ Ուօթսթրի
բանաստեղծը և հայերէնի թարգմա-
նեց Ստրով. կը ծախուի յիսուս
սանթիմի դիմել թարգմանին՝
Մ. ՆՐՄԷՆ ԱՐՏՕՆԶ
43 Տուկլա Բուս
Միքսրոն (Անկղղորդ)
Եւ կամ Ռուսիէն Գարսայապետեանի
Վառնա

Թ Ա Տ Ր Ո Ն Ս Ս Ա Ն Դ Ր Ա Լ

Պատան թատերախումբը այս
գիշեր պիտի ներկայացնէ «Մէյ-
մոնա» կամ «Ռարեկամութեան
Ձօհը», թատերգութիւն Յարաբը
և «Պատախոս Սափրիչը» յոյժ ծի-
ծաղաշարժ գաւեշտ 2 արար :
Կիրակի գիշեր պիտի ներկա-
յացնէ «Երանի» թատերախումբը
4 արարուած ու զուարճալի գա-
ւեշտ մը :

Օ Տ Վ Ո Ր Ն Ի Կ

Мурадъ-Ераносянъ

Печатница «Взвѣность», Варш